ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

ԴՊՐՈՑ՝ Դեղձավանի հիմնական դպրոց

ԴԱՍԱՐԱՆ՝ II _ III

ԴԱՍՎԱՐ՝ Մայրանուշ Մկրտումյան

2022-2023 ուստարի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ

Կազմակերպչական աշխատանք /իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն/		
1. Աշխատանքային պլանի կազմում	Օգոստոս	Դասվար
2.Դասագրքերի բաշխում	Օգոստոս Օգոստոս	Դասվար
3.Դասասենյակի կահավորում		
4 Դասագրքերի վիճակի ստուգում	Սեպտեմբեր	Դասվար
5 Համավարակի հնարավոր սրացման դեպքում համապատասխան կանոնների կիրառում	Ուստարվա ընթացքում	Դասվար

6. Միջանցքների հերթապահության վերահսկողություն	Ուստարվա ընթացքում	Դասվար
7. Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին	Ուստարվա ընթացքում	
8. Հաճախման օրերի տրամադրում	Սեպտեմբեր	Դասվար
9. Հաճախման ամենօրյա հաշվառում	Ուստարվա ավարտին	
10. Դասագրքերի հանձնում գրադարանին	Հունիս	
11.Ինքնակրթություն՝	Ողջ տարվա ընթացքում՝ Սեպտեմբեր	
ԱՅԲ-ի և ԿՁՆԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստումներ „Կրթություն՝ հանուն ապագայի” կողմից կազմակերպված անգլերենի դասընթաց՝ սկսնակների համար **ԿՏԱԿ՝Ուսումնական գործընթացի կազմակերպման առցանց միջոցներ** **ԿՏԱԿ՝ Առակների ուսուցումը տարրական դասարաններում** https://elearning.armedu.am/course/view.php?id=2112 **Դասավանդիր Հայաստանի կողմից կազմակերպվող դասընթացների մասնակցություն.** • **Ուսուցչի հակազդումն աշակերտի անցանկալի վարքին** • **Գերակտիվություն ունեցող աշակերտների հետ աշխատանքը** • **Ներառող դասավանդում**	2021-2022թթ- 2022թ. 2021թ. 2021թ նոյեմբեր	Դասվար

Աշխատանք աշակերտների հետ՝ ըստ անվանացանկի	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
/դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ/		
1. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ	Սեպտեմբեր	Դասվար
Ա. Կազմել աշակերտների ցուցակ,լրացնել տեղեկություններ ընտանիքների սոցիալական կարգավիճակի մասին	Սեպտեմբեր	
Բ. Ընդգրկել ներդասարանական և արտադպրոցական միջոցառումներում:	Ուստարվա ընթացքում	
Գ. Հնարավորության դեպքում կազմակերպել օգնություն ծնողական խորհրդի կողմից:		
2. Ուսման մեջ հետ մնացող աշակերտներ /անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն/		
Ա. Լրացուցիչ աշխատանք դասերից հետո Արտադասարանական խմբակի կազմակերպում	Ուստարվա ընթացքում	Դասվար
Բ. Աջակցություն համադասարանցիների կողմից Ուժեղ կարողությունների երեխաների կողմից օգնություն է տրամադրվում այն աշակերտներին,որոնք դրա կարիքն ունեն,որը նպաստում է նաև թիմային միջավայրի ստեղծմանը:	Ուստարվա ընթացքում	Դասվար
3. Անցանկալի վարք ցուցաբերող աշակերտներ	Հոկտեմբեր	
Ա. Անհատական զրույցներ Բ. Հանդիպում ծնողների հետ	Ուստարվա ընթացքում	
4. Առողջական և հոգեբանական խնդիրներ ունեցող աշակերտներ	Ուստարվա ընթացքում	
Ա. Հավաքագրել առողջական խնդիրներ ունեցող աշակերտների տվյալները , մշտապես կապ պահպանել դպրոցի բուժքրոջ և ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ	Սեպտեմբեր	Դասվար Բուժքույր Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
Բ. Հոգեբանական խնդիրներ ունեցող աշակերտների հետ պարբերաբար վարել անհատական զրույցներ	Ուստարվա Ընթացքում	
Գ. Կազմակերպել հանդիպումներ դպրոցի հոգեբանի հետ	Ըստ անհրաժեշտության	Դասվար Հոգեբան
Ե. Ռիսկի խմբի երեխաների հայտնաբերում,նրանց ներգրավում հեռավար ուսուցման գործընթացում:	--	

5.Արդադպրոցական խմբակներ հաճախող աշակերտներ չկան Դասարանի շնորհալի աշակերտների բացահայտում և ներգրավում արտադասարանական միջոցառումներում: **«Համայնքիս արահետներով»** նախագծի իրականացում	Հոկտեմբեր-մայիս	Դասվար

Աշխատանք ծնողների հետ /նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ/	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
1.Ծնողական ժողովներ	Սեպտեմբեր՝ 25.09.2021թ. Դեկտեմբեր Փետրվար մայիս	Դասվար Ծնողներ
2.Դպրոցական կոնոնների հետ ծանոթացում	Ուստարվա ընթացքում	Դասվար, Ուսուցրի օգնական
3. Սեմինար-խորհրդատվություն		
3.Մանկավարժական ընթերցումներ Նախատեսվում են ընթերցումներ և՛ ծնողական ժողովների ,և՛ մ/մ նիստերի ժամանակ Դասարանային մշակույթ	28.10.2021թ.	Դասվար Դասվար մ/մ նախագահ Մ.Մկրտումյան

Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ /համագործակցության միջոցով նպաստել աշակերտների ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը, հոգեբանական բարդույթների հաղթահարմանը/	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
1. Դասավանդող ուսուցիչներին իրազեկել դասարանի բարոյահոգեբանական վիճակի մասին	Սեպտեմբեր	Դասվար
Խոսել ռուսերենի և անգլերենի ուսուցիչների հետ,քանի որ վերջիններս չեն ճանաչում աշակերտներին,ներկայացնել նրանց յուրահատկությունները,ներկայացնել այն աշակերտներին,որոնք շփման որոշակի խնդիրներ ունեն:	Սեպտեմբեր	
2. Տեղեկացնել առողջական, հոգեբանական, վարքային խնդիրներ ունեցող աշակերտների մասին	Ուստարվա ընթացքում	Դասավանդող ուսուցիչներ
3. Պարբերաբար զրուցել աշակերտների ուսումնադաստիարակչական խնդիրների մասին	Ուստարվա ընթացքում	Դասվար
4. Կատարել դասալսումներ տարբեր առարկաներից՝ ռուսերեն, ինֆորմատիկա, անգլերեն, շախմատ	Ուստարվա ընթացքում	Դասվար, Ուսուցիչներ
5. Ուսուցիչների և ծնողների հետ կազմակերպել հանդիպումներ /ըստ անհրաժեշտության/	Ուստարվա ընթացքում	Դասվար, Բազմամասն ագիտական խումբ
6. Ուսուցիչներին հրավիրել ծնողական ժողովների		
7. Համագործակցել դպրոցի ուսուցչի օգնականի հետ		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն Խնդիրները՝ Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Զրույցների ,տարբեր իրավիճակների քննարկումներ Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում		Դասվար
Դասասենյակի հերթապահություն Կազմել աշակերտների հերթապահու-թյան ցուցակ, հետևողական լինել դրանց անթերի կատարմանը:	Ուստարվա ընթացքում	Դասվար,
Զույգերով կազմակերպել հերթապահությունը դասասենյակում՝ սեղանների ուղղում,գրատախտակի մաքրում:	Ուստարվա ընթացքում	Դասվար
1. **Դպրոցամերձ տարածքի մաքրում** Ակտիվորեն մասնակցել դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին, վերահսկել մաքուր տարածքների մշտական պահպանմանը:	Ուստարվա ընթացքում	Դասվար, Աշակերտներ
2. **Մասնակցություն համաքաղաքային շաբաթօրյակներին** Ակտիվորեն մասնակցել համայնքային շաբաթօրյակներին, ներգրավել դասարանի բոլոր աշակերտներին, սերմանել աշխատանքային դաստիարակություն:		
3. **Կանաչապատման աշխատանքներ** Գարնանը մասնակցել կանաչապատման աշխատանքներին, խնամել դպրոցամերձ այգու բույսերը:	Ուստարվա ընթացքում	
4. **Ծառատունկ** Գարնանը մասնակցել ծառատունկին:	Ուստարվա ընթացքում	Դասվար Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
5. **Միջդասարանային սպորտլանդիա** Զրուցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ և ընդգրկել աշակերտներին տարվա ընթացքում կազմակերպվող միջոցառումներին:		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
Ռազմահայրենասիրական և հոգևոր դաստիարակություն Խնդիրները՝ Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք հայ ազատամարտիկների նկատմամբ: Դասանյութերի, էքսկուրսիաների,զրույցների միջոցով ծանոթացնել աշակերտներին հայրենիքի հետ,հասցնել նրանց գիտակցությանը ,որ հայրենիքը արժեք է և նրանք դրա անբաժան մասն են կազմում: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն Սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:	Տարվա ընթացքում	Դասվար

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
Բարոյական և գեղագիտական դաստիարակություն Խնդիրները՝ Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:		
1.Մասնակցություն Գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը	Սեպտեմբեր	Դասվար
2.Զրույց- քննարկումներ դասղեկական ժամերի ընթացքում.	Ուստարվա ընթացքում	Դասվար
3.Հոգեբանավերլուծական թեստերի անցկացում	Ուստարվա ընթացքում	Հոգեբան Դասվար,ծնողներ
4.Ամանորյա տոնակատարություն	Դեկտեմբեր	Դասվար
5.Գիրք նվիրելու օր	Փետրվար	
6.Ընտանիքի միջազգային օր	Մայիս	
7.Այցելություն մշակութային օջախներ/թանգարան,թատրոն/		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
Գիտաճանաչողական դաստիարակություն *Խնդիրները՝* *Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում :* *Պարարտ հող են հանդիսանում և՛ մայրենիի,և՛ ԵՇԱ-ի դասանյութերը։* *Պատմամշակութային արժեքների գնահատում, արժևորում։*	Տարվա ընթացքում	Դասվար
/էքսկուրսիաներ, արշավներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ/ Թումանյանի տուն-թանգարան Տիկնիկային թատրոն	Տարվա ընթացքում	Դասվար

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ
Իրավական - քաղաքացիական դաստիարակություն *Խնդիրները՝* *Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում: Սովորեցնել աշակերտներին իրենց պարտականություններն ու իրավունքները,դասարանում ստեղծել կանոններ և պահպանել դրանք,ստեղծել այպիսի մթնոլորտ,որ աշակերտները գիտակցեն իրենց քայլերն ու դրանց հետևանքները:*	Սեպտեմբեր Սեպտեմբեր Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	Դասվար աշակերտներ Դասվար,աշակերտներ Աշակերտներ,ծնողներ
Դասարանի հերթապահության կազմակերպում *Հետևել սահմանված հերթապահության իրականացմանը,հասնել նրան,որ աշակերտները իրենք հետևեն իրենց ընկերներին,նրանց կողմից իրականացված աշխատանքներին՝* • դասարանի մաքրություն/սեղանների,գրատախտակի,հատակի/ • դասամիջոցների հերթապահություն • դասարանային կանոնների համաստեղծում	սեպտեմբեր	Դասվար և աշակերտներ

Դասագրքերի բաշխում /ուստարվա սկիզբ/		Դասագրքերի հավաքում /ուստարվա ավարտ/	
Դասագիրք ստացող աշակերտների թիվը՝ ըստ անվանացանկի	7	Դասագիրք հանձնող աշակերտների թիվը	7
Դասագրքերի ընդհանուր գումարը /մեկ հավաքածուի և ընդհանուր գումար չափը/	-	Դասագրքերի ընդհանուր վիճակը	լավ
Աշակերտներ, ովքեր պակաս քանակով են գիրք ստացել/գրքերի անվանումները/	-	Վնասված դասագրքեր	-
Վճարվող գումարի չափը	0	Կորած դասագրքեր -	-
Նոր դասագրքեր /անվանումը և տպագրման տարեթիվը/			7
Հին դասագրքեր /անվանումը և տպագրման տարեթիվը/	-		7 7
Լրացուցիչ տեղեկություն		Լրացուցիչ տեղեկություն	

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկան

Անցկացման օրը,ամիսը,տարեթիվը	Անցկացման կիջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
1.09.2022թ.	1-ին օրը դպրոցում/Գիտելիքի տոն	
08.09.2022թ.	Դպրոցն իմ երկրորդ տունն է	
15.09.2022թ.	Ես մի զարկն եմ քո բազկի	
22.09.2022թ.	Համավարակն ու ես	
29.09.2022թ.	Անվտանգ երթևեկություն	
6.10.2022թ.	Իմ պարտականություններն ու իրավունքները	
13.10.2022թ.	Անձնական հիգիենա	
20.10.2022թ.	Ես կարող եմ…	
27.10.2022թ.	Ես աշունն եմ սիրում	
3.11.2022թ.	Ես հետիոտն եմ՝ խաղ-դերակատարում	
10.12.2022թ.	Ձմռան բնանկար	
17.12.2022թ.	Դասագրքերի վիճակի ստուգում	
02.12.2022թ.	Ինչպես պաշտպանվել բնական աղետներից	
09.12.2022թ.	Եթե հրաշագործ լինեի…	
16.12.2022թ.	Հեքիաթին հյուր	
23.12.2022թ.	Ամանորյա ղողանջներ	
13.01.2023թ.	Հետարձակուրդային զրույցներ	
20.01.2023թ.	Իմ ընկերը	
27.01.2023թ.	Հայոց բանակ	
3.02.2023թ.	Գրադարանում	
10.02.2023թ.	Ազգային տոներ	

17.02.2023թ.	Անվտանգ համացանց	
24.02.2023թ.	Անձնական հիգիենա	
3.03.2023թ.	Մայր իմ անգին..	
10.03.2023թ.	Գարունը այնքան ծաղիկ է վառել	
17.03.2023թ.	Էկո աղբ	
25.03.2023թ.	Հեքիաթի ընթերցում	
4.04.2023թ.	Քննարկում դասարանում առկա վիճակի	
11.04.2023թ.	Խոսում են տիկնիկները	
18.04.2023թ.	Նկարում ենք միասին	
25.04.2023թ.	Մաթեմատիկայի հրաշալի աշխարհում	
1.05.2023թ.	Ի՞նչ են ասում հեքիաթները	
8.05.2023թ.	ՈՒրախ մայրենի	
15.05.2023թ.	Դասագրքերի ստուգում	

Ծնողական խորհուրդ

Անուն Ազգանուն Հայրանուն	Հեռախոս
Բալյան Էմմա վալերի	077-43-22-48
Հարությունյան Քրիստինե	077-31-11-35

Դասարանի բնութագիրը

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

«ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ /08 փետրվարի 2018թ. N 94-Ա/2/

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

ԾՐԱԳԻՐ

1. Ով է հետիոտնը

Հետիոտնը և նրանք, ովքեր հավասարեցվում են հետիոտնին:

2. Մեր փողոցներում

Մեր բնակավայրը (քաղաք, ավան): Փողոց: Մայթ: Փողոցի երթևեկելի մաս: Խաչմերուկներ: Ինչո՞ւ է փողոցում վտանգավոր: Մեր անվտանգությունը փողոցում: Փողոցների ո՞ր մասով պետք է քայլել: Փողոցում կարգապահությունը անվտանգ երթևեկության գրավականն է:

3. Մենք գնում ենք դպրոց

Պատմել այն տարածքի մասին, որտեղ գտնվում է դպրոցը: Առավել անվտանգ երթուղին՝ ամենալավն է: Որտեղ և ինչպես պետք է անցնել փողոցը, ճանապարհը:

Մեկն օգնում է մյուսին (չես կարող փողոցն անցնել՝ խնդրիր մեծահասակներին օգնել քեզ):

Սովորողների կողմից դպրոցի ճանապարհի հիմնական երթուղիների վերլուծություն:

4. Սա պետք է իմանան բոլորը

Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ ճանապարհային երթևեկության կանոնները: Ինչպե՞ս պետք է քայլել փողոցում խմբերով: Հետիոտների տեղաշարժի առանձնահատկությունները թաց և սայթաքուն (անձրև, սառցամածություն, ձյունատեղում) ճանապարհներով:

5. Մեր հավատարիմ բարեկամները

Ճանապարհային երթևեկությունը կարգավորող տեխնիկական միջոցները և կարգավորողի ազդանշանները:

Լուսացույցը և նրա ազդանշանները: Կարմիր լույսը արգելում է երթևեկությունը («Կանգ առ»), դեղին գույնը՝ արգելում է երթևեկությունը և զգուշացնում լուսացույցի ազդանշանների փոփոխման մասին («Ուշադրություն»), կանաչ գույնը՝ թույլ է տալիս երթևեկել («Ճանապարհը բաց է»):

Կարգավորողի ազդանշանները և դրանց նշանակությունը: Հետիոտնային լուսացույցը և դրա ազդանշանները:

6. Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին

Ճանապարհային նշանները՝ «Երկաթուղային գծանց ուղեփակոցով», «Երկաթուղային գծանց առանց ուղեփակոցի», «Հավասարազոր ճանապարհների հատում», «Լուսացուցային կարգավորում», «Հետիոտնային անցում» /նախազգուշացնող նշան/, «Երեխաներ», «Մուտքն արգելվում է», «Հետիոտների տեղաշարժն արգելվում է», «Հետիոտնային արահետ», «Հեծանվային արահետ», «Ավտոբուսի և (կամ) տրոլեյբուսի կանգառի տեղ», «Հետիոտնային անցում» /հատուկ թելադրանքի նշան/, «Ստորգետնյա հետիոտնային անցում», «Վերգետնյա հետիոտնային անցում», «Առաջին բուժօգնության կետ», «Հիվանդանոց», «Ճանապարհային ոստիկանություն», «Ոստիկանություն»,«Զուգարան»:

7. Որտե՞ղ կարելի է խաղալ

Ինչո՞ւ չի կարելի խաղալ փողոցներում և ճանապարհներին: Չմուշկներով և սահնակներով սահելու, ինքնագնացներով և հեծանիվներով խաղալու տեղեր:

8. Մենք ուղևորներ ենք

Հասարակական տրանսպորտ՝ ավտոբուս, տրոլեյբուս, երթուղային տաքսի: Հասարակական տրանսպորտից օգտվելու կանոնները և տրանսպորտում իրենց դրսևորելու ձևերը:
Հասարակական տրանսպորտի կանգառ: «Ավտոբուսի և (կամ) տրոլեյբուսի կանգառի տեղ» ճանապարհային նշանը:
Ինչպե՞ս պետք է շրջանցել կանգնած տրոլեյբուսը, ավտոբուսը և ավտոմեքենաները: Ինչո՞վ է վտանգավոր հանկարծակի երթևեկելի մաս դուրս գալը:
9. Քաղաքամերձ ճանապարհին
Ճանապարհ: Մայթերը, ճամփեզրը, հետիոտնային արահետը՝ հետիոտների երթևեկության տեղերն են:
Ճանապարհով հետիոտների տեղաշարժվելու կանոնները: Որտե՞ղ կարելի է հատել ճանապարհը: Անցում երկաթուղային գծանցով:
Ճանապարհային նշաններ՝ «Ուղեփակոցով երկաթուղային գծանց», «Առանց ուղեփակոցի երկաթուղային գծանց»: Ինչպե՞ս և ո՞ւմ հետ պետք անցնել երկաթուղային գծանցը: Երկաթուղային գծերի (հողաթմբերի) վրայով քայլելը, երկաթուղային գծերի մոտ խաղերի կազմակերպումը արգելվում է:
10. Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները
Տրանսպորտային միջոցների մոդելների, կարգավորման միջոցների մակետների, փողոցների և ճանապարների ուրվագծերի, ըստ ճանապարհային երթևեկության կանոնների սեղանի և շարժական խաղերի, ինչպես նաև դահլիճում կամ հատուկ հրապարակում մրցումների անցկացման միջոցով ամրապնդել գիտելիքներն ու հմտությունները ծրագրի բոլոր թեմաների վերաբերյալ:
ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԾՐԱԳԻՐ
1. Փողոցում և ճանապարհին աշակերտի վարքի հիմնական կանոնները: Մանկական ճանապարհատրանսպորտային վնասվածքներ
Առաջին դասարանում անցած՝ փողոցներում և ճանապարհներին անվտանգ վարքի կանոնների կրկնություն: Ավանում, քաղաքում երեխաների հետ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների օրինակներ (ըստ տեղական ճանապարհայինոստիկանության նյութերի):
Դպրոցամերձ տարածքներում հետիոտների տեղաշարժիվտանգավորտարածքները:
Աշակերտների երթուղիների՝ տուն-դպրոց, զբոսայգի, կինոթատրոն և այլնի վերլուծություն:
2. Հետիոտների տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով
Ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը՝ հետիոտների անվտանգության գրավականն է:
Հետիոտների տեղաշարժը մայթով և ճանապարհով:
Հետիոտների և տրանսպորտային միջոցների աջակողմյան երթևեկությունը:
Ճանապարհներով հետիոտների տեղաշարժիառանձնահատկությունները: Դպրոց տանող առավել անվտանգ ճանապարհի ընտրությունը:
3. Փողոցներիևճանապարհների տարրերը: Ճանապարհային գծանշում
Փողոցների տարրեր՝ երթևեկելի մաս, մայթ: Մայթերի պարսպելը երթևեկելի մասից:
Պատմել ճանապարհի և նրա գլխավոր բաղադրիչ մասերի՝ երթևեկելի մասի, ճամփեզրի, ճամփեզրի ջրատար առվի, հեծանվային և հետիոտնային արահետների մասին:
Ճանապարհային գծանշում (հանդիպակաց տրանսպորտային միջոցների հոսքի բաժանումը հոծ կամ ընդհատվող գծով, հետիոտնային անցման գծեր և այլն):
4. Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները
Լուսացույցի դերը: Կանաչ, կարմիր և դեղին ազդանշանների նշանակությունը:
Լուսացույցների լրացուցիչ սեկցիաների նշանակությունը: Հետիոտնային լուսացույցները և նրանց ազդանշանների նշանակությունը:
Կարգավորողի դիրքը և ժեստերը, որոնք համապատասխանում են լուսացույցի կարմիր, դեղին և կանաչ ազդանշաններին:
5. Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները

Տեղեր, որտեղից թույլատրվում է անցնել փողոցները (ճանապարհները)՝ հետիոտնային անցում, ստորգետնյա հետիոտնային անցում, վերգետնյա հետիոտնային անցում:
Լուսացույցների և կարգավորողի ազդանշաններով փողոցներն ու ճանապարհներն անցնելը:
Միակողմ և երկկողմ երթևեկությամբ փողոցի անցնելը: Մերձքաղաքային ճանապարհի հատման առանձնահատկությունները նշված հետիոտնային անցումների բացակայության դեպքում:
Դպրոց գնալիս առավել անվտանգ երթուղու ընտրելը:
6. Խաչմերուկները և դրանց տեսակները: Տրանսպորտային միջոցների և վարորդների ազդանշանները:
Կարգավորվողևչկարգավորվողխաչմերուկներ: Դրանքհատելուառանձնահատկությունները:
Խաչմերուկումտեղադրվածճանապարհայինինշանները և գծանշումները:
Դրանցկարևորությունը հետիոտնի անվտանգության համար:
Տրանսպորտային միջոցների և վարորդի զգուշացնող երթևեկության ուղղությունը փոխելու մասին նախազգուշացնող ազդանշանները: Այդ ազդանշանների նշանակությունը հետիոտների համար:
7. Ճանապարհային նշաններ:
Առաջին դասարանում յուրացրած ճանապարհային նշանների իկրկնություն:
Նախազգուշացնող՝ «Սայթաքուն ճանապարհ», «Արհեստական անհարթություն», «Հատում հեծանվային արահետի հետ», «Ճանապարհային աշխատանքներ», «Վայրի կենդանիներ»,«Անասուններ ի քշում»,«Քարերի անկում», «Թունել»:
Արգելող՝ «Երթևեկությունն արգելվում է», «Հետիոտներ ի տեղաշարժն արգելվում է», «Հեծանիվներով երթևեկությունն արգելվում է»:
Թելադրող՝ «Երթևեկությունն ուղիղ», «Երթևեկությունը դեպի աջ», «Երթևեկությունը դեպի ձախ», «Երթևեկությունն ուղիղ և դեպի աջ», «Երթևեկությունն ուղիղ և դեպի ձախ»:
Հատուկ թելադրանքի՝ «Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ», «Բնակավայրի սկիզբ», «Բնակավայրի վերջ»:
Սպասարկման՝«Առաջին բժշկական օգնության կետ»,«Ավտոմոբիլներ ի լվացում»:
8. Ուղևորների պարտականությունները
Հասարակական տրանսպորտ բարձրանալու և իջնելու կանոնները:
Քաղաքային և ռելսային տրանսպորտից օգտվելու կանոնները:
Քաղաքային և երկաթուղային տրանսպորտում աշակերտների վարքի կանոնները:
Բեռնատար մեքենաներով երեխաներին տեղափոխելու կանոնները:
9. Տրանսպորտային միջոցներից իջնելուցհետո փողոցն անցնելու կանոնները
Ավտոբուսից, տրոլեյբուսից կամ այլ փոխադրամիջոցից իջնելուցհետո փողոցն անցնելու կանոնները:
10. Երթևեկության կանոնների գործնական պարապմունքներ և խաղեր հատուկ գծանշված հրապարակում կամ փողոցում
Խաղերի և մրցումների անցկացում հատուկ գծանշված հրապարակում: Հրապարակում տեղադրվում են սարքավորումներ, լուսացույցներ և ճանապարհային նշաններ: Խաչմերուկներում երթևեկությունը կարգավորում են երթևեկության պատանի տեսուչները: Որպես տրանսպորտային միջոցներ, խորհուրդ է տրվում օգտագործել մոտոցիկլներ, հեծանիվներ, ոտնակով և էլեկտրական միկրոավտոմեքենաներ:

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն
Քաղաքների և խոշոր գյուղերի բնակչության աճը, փողոցների և ճանապարհների երթևեկության լարվածությունը: Երթևեկության լարվածությունը և արագությունը:
Ճանապարհատրասպորտային պատահարների պատճառները՝ երթևեկության կանոններին հետիոտների անգիտակ լինելը կամ չկատարելը, հասարակական տրանսպորտից օգտվելու կանոնների խախտումը, փողոցներում անկարգապահ լինելը:

Հասարակական տրանսպորտում, փողոցում, ճանապարհին հետիոտնի կարգապահության դաստիարակումը:
Անվտանգ երթևեկություն ապահովելու գործում պետական քաղաքականությունը:
«Ճանապարհայինոստիկանություն» ծառայություն (ՃՈ) :
2. Խաչմերուկները և դրանց տեսակները: Ճանապարհային գծանշումներ
Խաչմերուկը՝ փողոցների, ճանապարհների հատման տեղն է:
Խաչմերուկների տեսակները՝ երեքկողմանի, չորսկողմանի և հրապարակներ: Խաչմերուկների սահմանները:
Փողոցների և ճանապարհների գծանշումներ: Փողոցների և ճանապարհների հիմնական գծանշումները և դրանց նշանակությունը:
3. Ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշանները
Տրանսպորտային և հետիոտնային լուսացույցների ազդանշանները և դրանց նշանակությունը:
Կարգավորողի ազդանշանները և դրանց դերը:
Վարորդների և հետիոտների գործողությունները՝ ըստ լուսացույցի կամ կարգավորողի ազդանշանների:
Կարգավորողի ազդանշանները լուսացույցի ազդանշաններից կարևոր են (միաժամանակյա կարգավորման դեպքում):
4. Ճանապարհային նշանները և դրանց խմբերը
Ճանապարհային նշանների խմբերը՝ 1.նախազգուշացնող, 2.առավելության, 3.արգելող, 4.թելադրող, 5.հատուկթելադրանքի, 6.տեղեկատվության, 7.սպասարկման, 8.լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ):
Նշանների դերը հետիոտների համար: Ճանապարհային նշանների տեղադրման տեղը: I-II դասարաններում ուսումնասիրված ճանապարհային նշանների վերաբերյալ աշակերտների գիտելիքների ամրապնդումը:
Նախազգուշացնող՝ «Միագիծ երկաթուղի», «Բազմագիծ երկաթուղի», «Կտրուկվայրէջք», «Կտրուկվերելք», «Ճանապարհինեղացում», «Երկկողմերթևեկություն»
Առավելության՝ «Գլխավոր ճանապարհ», «Զիջեք ճանապարհը», «Հատումերկրորդականճանապարհիհետ», «Երկրորդականճանապարհիհատում»
Թելադրող՝ «Շրջանաձև երթևեկություն», «Արգելքիշրջանցումնաջից», «Արգելքիշրջանցումընձախից», «Արգելքիշրջանցումնաջիցկամձախից»
Հատուկթելադրանքի ՝ «Միակողմանի երթևեկության ճանապարհ», «Միակողմանի երթևեկության ճանապարհի վերջը», «Ելքդեպիմիակողմանի երթևեկության ճանապարհ»
Սպասարկման՝ «Ավտոլվացմանկայան», «Ավտոմոբիլներիտեխնիկականսպասարկում», «Ավտոմոբիլներիլվացում», «Սննդիկետ», «Խմելուջուր», «Հանգրվան»:
5. Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները
Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները: Այն տեղերը, որտեղ թույլատրվում է փողոցների, ճանապարհների անցումը: Կարգավորվող և չկարգավորվող հետիոտնային անցումներ:
Փողոցների և ճանապարհների անցումը լուսացույցի կամ կարգավորողի ազդանշաններով:
Դպրոց, գրադարան, խանութ, մարզադաշտ և այլն գնալու առավել անվտանգ երթուղի ընտրելը:
Միակողմ և երկկողմ երթևեկությամբ փողոցներն անցնելը:
6. Տրանսպորտային միջոցների արգելակման ճանապարհը
Ավտոմեքենան և մյուս տրասպորտային միջոցները կտրուկարգելակել չի կարելի:
Արգելակման ճանապարհի մեծության վրա ազդող գործոններ:
Տրանսպորտային միջոցների առջևից փողոցներն ու ճանապարհներն անցնելու վտանգը:
7. Տրանսպորտային միջոցների տեսակներ
Ավտոմեքենաներ՝ բեռնատար, մարդատար, հատուկ:
Դրանց նշանակությունը: Ավտոբուսները, տրոլեյբուսները և երթուղային տաքսիները ընդհանուրօգտագործման տրանսպորտայինմիջոցներ են: Ուղևորների տրանսպորտային միջոցներ բարձրանալու և իջնելու կանոնները:

8. Սեղանի խաղեր ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ
Ճանապարհային երթևեկության կանոնների գիտելիքների ամրապնդում՝ սեղանի խաղերի կամ ճանապարհային երթևեկության վերաբերյալ հավաքածուների օգտագործմամբ:
9. Փողոցներում և ճանապարհներին վարքի կանոնների վերաբերյալ խաղեր և մրցումներ
Փողոցներում և ճանապարհներին հետիոտներիտեղաշարժի գիտելիքների և կարողությունների վերաբերյալ խաղերը և մրցումները պետք է կազմակերպել ճանապարհային գծանշումներով հատուկ հրապարակում (ավտոդրոմ, ավտոքաղաք և այլն):
Տեղադրվում են լուսացույցներ, ճանապարհային նշաններ, խաչմերուկներում և հետիոտնային անցումներում երթևեկությունը կարգավորում են երթևեկության պատանի տեսուչները. որպես տրանսպորտային միջոցներ օգտագործվում են մոտոցիկլներ, հեծանիվներ, ոտնակով և էլեկտրական միկրոավտոմեքենաներ:
10. Հանրագումարային պարապմունք
Ճանապարհային երթևեկության անվտանգությանապահովման, փողոցներում և ճանապարհներին հետիոտներիտեղաշարժի կանոնների աշակերտների գիտելիքների ստուգումը անց է կացվում վիկտորինաների, հարց ու պատասխանի և այլնի միջոցով:
ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԾՐԱԳԻՐ
1. Մեր դպրոցի ճանապարհը և նոր երթուղիները
Պատմել այն թաղամասի մասին, որտեղ գտնվում է դպրոցը: Դպրոցի շրջապատի մանրամասն վերլուծությունը: Ընդհանուրօգտագործման տրանսպորտի մոտակա կանգառները: Առավել վտանգավոր տեղերը:
Աշակերտների տեղաշարժի այն երթուղիների վերլուծությունը, որոնցից նրանք հաճախ են օգտվում: Դպրոց-խանութ, գրադարան, մարզադաշտ և այլ տեղեր գնալիս անվտանգ երթուղի ընտրել կարողանալը:
2. Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգումը
III դասարանում ուսումնասիրած ճանապարհային երթևեկության կանոնների նյութի կրկնություն:
Քաղաքում (համայնքում) սովորողներիմասնակցությամբ տեղի ունեցող ճանապարհատրանսպորտային պատահարների օրինակներ (ըստ տեղական
Ճանապարհայինոստիկանության նյութերի) և երթևեկության կանոնները խախտող երեխաների վարքագծերի քննարկում:
3. Սովորողներիտեղաշարժըխմբերով և շարասյուներով
Մայթով, ճանապարհի եզրով, հետիոտնային անցումով սովորողների խմբով տեղաշարժվելուկարգը: Սովորողների՝ շարասյունով երթևեկելու կարգը:
Խմբով սովորողների հասարակական տրանսպորտ բարձրանալու կանոնները:
4. Վարորդի աշխատանքը
Վարորդի աշխատանքը լարված և պատասխանատու աշխատանք է: Վարորդի պարտականությունները անվտանգ երթևեկությունը ապահովելու գործում: Հետիոտների պարտաճանաչությունը հեշտացնում է վարորդի աշխատանքը: Երեխաները՝ ուղևորներ:
5. Աշակերտների տեղափոխումը բեռնատար ավտոմեքենաներով
Բեռնատար ավտոմեքենաներով աշակերտներին տեղափոխելու առանձնահատկությունները՝ թափքը նստատեղերով և այլ պարագաներով սարքավորելը: Ուղեկցողների առկայությունը, ավտոմեքենաների վրա հատուկ «Երեխաներ» նշանների տեղադրումը: Ուղևորների նստելու և իջնելու կանոնները: Աշակերտների վարքի կանոնները բեռնատար ավտոմեքենաներով նրանց փոխադրելիս:
6. Վարորդների նախազգուշացնող ազդանշանները
Շրջադարձի լուսային ցուցիչներով կամ ձեռքով նախազգուշացնող ազդանշաններ տալը: Այդ ազդանշանների նշանակությունը վարորդների և հետիոտների համար:
7. Ավտոմեքենաները և մոտոցիկլները հատուկ ազդանշաններով սարքավորելը
Հատուկ ավտոմեքենաներ՝ շտապ բուժօգնության, հրշեջ, ոստիկանության, վթարային:

Ձայնային և լուսային հատուկ ազդանշաններով կահավորված ավտոմեքենաների անցնելու իրավունքի առավելությունը:
Ի՞նչ պետք է անի հետիոտնը՝ լսելով և տեսնելով այդ ազդանշանները:
Պատմել ճանապարհային ոստիկանության պարեկայինկարգախմբի ծառայության մասին:
8. Գործնական պարապմունքներ հատուկ գծանշված հրապարակներում
Մոտոցիկլներով, հեծանիվներով և ոտնավոր ավտոմեքենաներով սովորողների խմբերով տեղաշարժը հրապարակի, ավտոդրոմի, ավտոքաղաքի և այլնի երթևեկելի մասով:
Աշակերտների երթևեկելը մայթերով և հետիոտնային անցումներով: «Վարորդները» տալիս են նախազգուշացնող ազդանշաններ, «հետիոտները» հետևում են այդ ազդանշաններին և հաշվի են առնում դրանք՝ փողոցն անցնելիս:
9. Էքսկուրսիա քաղաքում
Հետևել ճանապարհային երթևեկությանը, վարորդների նախազգուշացնող ազդանշաններին, պատմել փողոցներում տեղադրված լուսացույցերի և ճանապարհային նշանների մասին: Հետևել խաչմերուկներում կանգնած կարգավորողի գործողություններին:
10. Հանրագումարային պարապմունք
Ճանապարհային երթևեկության վերաբերյալ էլեկտրոնային նյութերի և կինոֆիլմերի դիտում և դրանց քննարկում: Խաղեր անվտանգ երթևեկության վերաբերյալ:

Digitally signed by BEJANYAN ALISA 6407760267
Date: 2022.12.06 16:39:23 MSK